



შფანაგისა და გამომცდების
ეროვნული ცენტრი

Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ

Մաղթում ենք հաջողություն:



Հրահանգ

➤ Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-12, 19.1, 23.1, 23.2)

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր, ինչը նշված է առաջադրանքի երկայնքով:

(1) 1. Թվարկաձևերից ո՞ր տերմինն է ենթադրում անձի ազատում որևէ մեկի ենթակայությունից և արդյունքում, անկախության և հավասար իրավունքների ձեռք բերում:

ս) սեգրեգացիա,

ծ) ինտեգրում,

ճ) էմանսիպացիա,

Պ) սոցիալականացում:

(1) 2. Ինչպե՞ս է կոչվում պետության կողմից քաղաքացիության շնորհումն օտարերկրացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին:

ա) ռեպատրիացիա,

բ) նատուրալիզացիա,

գ) նացիոնալիզացիա,

զ) ռեսուցիալիզացիա:

(1) 3. Վրաստանի գործող Սահմանադրության համաձայն, նվազագույնը քանի՞ ընտրող ունի օրենսդրական նախաձեռնություն ներկայացնելու իրավունք:

ա) 35000,

բ) 25000,

գ) 15000,

դ) 10000:

(1) 4. Ո՞ր եզրույթն է համապատասխանում այն աշխարհայացքին, համաձայն որի աշխարհիկ և հոգևոր ինստիտուտները պետք է տարանջատվեն իրարից և չմիջամտեն միմյանց գործունեությանը:

ա) ալտրուիզմ,

բ) պլուրալիզմ,

գ) կոնֆորմիզմ,

դ) սեկուլյարիզմ:

(1) 5. Ինչպե՞ս է կոչվում հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ընտրվելու և հանրային իշխանության պաշտոն զբաղեցնելու նպատակով իր թեկնածությունն առաջադրելու քաղաքացու իրավունքը:

- ա) պասիվ ընտրական իրավունք,
- ծ) ակտիվ ընտրական իրավունք,
- ց) նեգատիվ ընտրական իրավունք,
- զ) պոզիտիվ ընտրական իրավունք:

(1) **6. Ո՞ր դատողությունը ճիշտ չի արտահայտում հրավական ակտի հասկացության իմաստը:**

Տ) Իրավական ակտն իրավաբանական ուժ ունեցող պաշտոնական փաստաթուղթ է, որի հիմնական նպատակն է կարգավորել մասնավոր և հանրային իրավահարաբերությունները:

Ծ) Իրավական ակտն ընդունվում է Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կանոններին համապատասխան, լիազորված պետական կամ մունիցիպալիտետի մարմնի (պաշտոնատար անձի) կողմից և ենթակա է պարտադիր իրականացման:

Ճ) Իրավական ակտը տրվում է պետական կամ մունիցիպալիտետի մարմնի (պաշտոնատար անձի) կողմից և այդ ակտում հիմնականում ձևակերպված են անհատների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Ծ) Իրավական ակտը տրվում է պետական կամ մունիցիպալիտետի մարմնի (պաշտոնատար անձի) կողմից՝ Վրաստանի գործող օրենսդրությանը համապատասխան, և յուրաքանչյուր այդպիսի փաստաթուղթ ունի հավասար իրավաբանական ուժ:

(1) **7. Վրաստանի օրենսդրության համաձայն, արբիտրաժն իրավասու է քննարկել.**

- Տ) վճարել քողոքները և ամբողջությամբ կամ մասամբ բեկանել շրջանային դատարանի որոշումը,
- Ծ) քրեական գործերը և որոշել կոնկրետ անձանց մեղավորության կամ անմեղության հարցը,
- Ճ) Վրաստանի խորհրդարանի անդամի լիազորությունների ճանաչման կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը,
- Ծ) անձանց հավասարության վրա հիմնված մասնավոր բնույթ ունեցող այն գույքային վեճերը, որոնք կարող են լուծվել կողմերի միջև:

(1) **8. Կոլեկտիվ իրավունքների մասին թվարկած դատողություններից ո՞րն է ճիշտ:**

ս) 1972 թվականին ընդունվեց Մարդու շրջակա միջավայրի մասին հռչակագիրը, որը հիմք դրեց էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրելու իրավունքի: Այդ իրավունքը նախատեսված է կոլեկտիվ շահի համար և պատկանում է առաջին սերնդի իրավունքներին:

ծ) Երրորդ սերնդի իրավունքները կոչվում են կոլեկտիվ կամ համերաշխության իրավունքներ, քանի որ դրանք կարող են իրականացվել ոչ թե անկախ անձի, այլ անհատների միավորումների, խմբերի կողմից: Այդ իրավունքներն են, օրինակ, խաղաղության և կայուն զարգացման իրավունքները:

զ) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ստեղծմանն անմիջապես հաջորդեց կոլեկտիվ իրավունքների սահմանումը: Կոլեկտիվ իրավունքները հայտնի են որպես երկրորդ սերնդի իրավունքներ և դրանց պաշտպանությունն ապահովում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան:

զ) 19-րդ դարի 60-ական թվականներին դրվեց կոլեկտիվ իրավունքների ձևավորման հիմքը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը ծառայում է հենց այդ իրավունքների պաշտպանությանը:

(1) **9. Կոնֆլիկտային իրավիճակներում փոխզիջման վարքի մոդելն օգտագործելը նպատակահարմար է այդ դեպքում, երբ.**

Տ) Կողմերն ունեն հավասար իշխանություն և որոշումն անհրաժեշտ է կայացնել շտապ կարգով: Նման դեպքում երկու կողմերն էլ ըստ անհրաժեշտ չափի պաշտպանում են իրենց շահերը, և կողմերից ոչ մեկի շահերը լիովին չեն բավարարվում:

Ծ) Ի տարբերություն երկրորդ կողմի դուք ունեք ավելի քիչ իշխանություն, մինչդեռ խնդիրը ձեր համար աննշան է և ցանկանում եք ժամանակ շահել: Նման դեպքում երկու կողմերի շահերն անտեսվում են:

Ճ) Երկրորդ կողմն ունի ավելի մեծ իշխանություն և ձեզ համար կարևոր է պահպանել հարաբերությունները, մինչդեռ երկրորդ կողմի համար առավել կարևոր է արդյունքը: Նման դեպքում երկրորդ կողմի շահերը բավարարվում են ձեր սեփական շահերի հաշվին:

Ծ) Ի տարբերություն երկրորդ կողմի ձեր իշխանությունն առավել մեծ է, իրավիճակը կրիտիկական է, և ձեզ համար շատ կարևոր է արդյունքը: Նման դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է միայն սեփական շահերի բավարարման վրա, մինչդեռ մյուս կողմի շահերն անտեսվում են:

(1) **10. Ինչպիսի՞ն է շուկայի կառուցվածքը մենաշնորհային մրցակցության պայմաններում:**

- Տ) Շուկայում միակ արտադրողն է, ով թողարկում է այս կամ այն եզակի ապրանքը և անձամբ վերահսկում ապրանքի գինը:
- Ծ) Շուկայում բազմաթիվ ձեռնարկատերեր վաճառում են որոշ չափով տարբերակված ապրանքներ, և նոր ձեռնարկությունների համար շուկա մուտք գործելու արգելքը ցածր է:
- Ճ) Շուկայում կան շատ ձեռներեցներ, որոնք համանման արտադրանքը վաճառում են գրեթե նույն գնով, իսկ նոր արտադրողների համար չկան շուկա մուտք գործելու խոչընդոտներ:
- Ծ) Շուկայում գերիշխում են փոքր թվով խոշոր ձեռնարկատերեր, որոնք արտադրում են ամբողջ արտադրանքի մեծ մասը, իսկ նոր ձեռնարկությունների համար դժվար է մուտք գործել շուկա:

(1) 11. Ինֆորաֆիկան արտացոլում է Սաքստատի 2019 թվականի հիմնական ժողովրդագրական ցուցանիշները Վրաստանում:



Ո՞ր դատողությունն է համապատասխանում ինֆորաֆիկայի տվյալներին:

- ա) 2019 թվականին Վրաստանի բնակչության թիվը նվազել է:
- բ) Վրաստանում 2019 թվականին ամուսնալուծությունների թիվը գերազանցել է ամուսնությունների թվին:
- գ) Սեզոնային տեսանկյունից երեխաների ծնելիության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է զարնանը, իսկ ամուսնություններինը՝ ամռանը:
- դ) Առաջին ամուսնության ժամանակ կանանց միջին տարիքը գերազանցում է առաջին երեխան ծնվելիս մոր միջին տարիքին:

(1) **12. Առաջադրանքում ներկայացված են 2018 թվականին անցկացված «Վրաստանի բնակչության գիտելիքներն ու վերաբերմունքը դատական համակարգի նկատմամբ» հետազոտության արդյունքները.**

- Բնակչության կարծիքով, քաղաքային / շրջանային դատարանի դատավորներ նշանակելիս հիմնականում հաշվի են առնում դատավորի կողմից օրենսդրության իմացությունը (60%), համապատասխան փորձը (54%), ազնվությունը (44%) և շահավետ կապերը քաղաքական շրջանակների հետ (20 %):
- Բնակչության 37%-ը չի վստահում քաղաքային / շրջանային դատարաններին, 33%-ը՝ չեզոք վերաբերմունք է ցուցաբերում, 19%-ը՝ վստահում է: Վերաքննիչ դատարանի նկատմամբ անվստահություն է հայտնում բնակչության 35%-ը, չեզոք վերաբերմունք է ցուցաբերում 32%-ը, իսկ վստահում է՝ 22% -ը: Բնակչության 37% -ը չի վստահում Վրաստանի Գերագույն դատարանին, 32%-ը չեզոք է տրամադրված, իսկ 24% -ը՝ վստահում է:
- Բնակչության 42%-ի կարծիքով, վերջին 5 տարվա ընթացքում դատական համակարգը չի փոխվել: 21% -ը գտնում է, որ այն բարելավվել է, մինչդեռ 29% -ի կարծիքով դատական համակարգը վատթարացել է:

Տվյալների հիման վրա կայացված ո՞ր եզրակացությունն է ճիշտ:

- Տ) Ընդհանուր դատարանների նկատմամբ վստահության ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ բնակչության մեծ մասը կասկածի տակ է դնում դատավորների գիտելիքները:
- Ծ) Բնակչության մեծ մասը գտնում է, որ Վրաստանում դատավորներ ընտրելու գործընթացը քաղաքականացված է:
- Չ) Բնակչության մեծամասնության կարծիքով, դատական համակարգը ժամանակի ընթացքում բարելավվում և առաջընթաց է ապրում:
- Կ) Բոլոր երեք ատյանների դատարանների նկատմամբ բնակչության մեծ մասն անվստահություն է հայտնում, քան վստահություն:

Հրահանգ

Հաջորդականության սահմանում (№13)

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն:
Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը:
Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

- (1) 13. Միեմայում ներկայացված են Միավորված ազգերի կազմակերպության անդամ երկրները: Դասավորեք դրանք հաջորդականության սկզբունքով՝ կազմակերպությանն անդամագրվելու ամսաթվի համաձայն.



			4*	
--	--	--	----	--

* աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

Հրահանգ

Համապատասխանության որոշում (№14, 15, 16)

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունն այս երկու սյունակներում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:


- (1) 14. SWOT վերլուծությունը շրջակա միջավայրը և հնարավորությունները վերլուծելու մեթոդներից մեկն է: I սյունակում տրված հանգամանքներին համապատասխանեցրեք II սյունակում ներկայացված SWOT վերլուծության տարրերը:






I. Հանգամանքներ		II. SWOT վերլուծության տարրեր
<p>ա)</p> <ul style="list-style-type: none"> ➤ Ընկերությունն ունի բանիմաց և փորձառու անձնակազմ: ➤ Ընկերությունն ունի եզակի ռեսուրսներ: 	<p>բ)</p> <ul style="list-style-type: none"> ➤ Աճում է ընկերության հավատարիմ հաճախորդների թիվը: ➤ Ավելանում է նոր տեխնոլոգիաների մատչելիությունը: 	<ol style="list-style-type: none"> 1. Թույլ կողմեր 2. Ուժեղ կողմեր 3. Հնարավորություններ 4. Վտանգներ
<p>գ)</p> <ul style="list-style-type: none"> ➤ Մրցակից ընկերությունը հաճախորդներին առաջարկում է նորարարական ապրանք և ծառայություն: ➤ Շուկայում ի հայտ են գալիս նոր մրցակից ընկերություններ: 	<p>դ)</p> <ul style="list-style-type: none"> ➤ Ընկերությունը ցածր հեղինակություն է վայելում շուկայում: ➤ Ընկերության անձնակազմը մոտիվացված չէ: 	

(2) **15. II սյունակում ներկայացված ժողովրդավարական ընտրությունների հիմնական սկզբունքները համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված բացատրություններին.**

I. Բացատրություններ	II. Ընտրությունների հիմնական սկզբունքները
<p>ա) Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն համապատասխան տարիքի բոլոր այն քաղաքացիները, ովքեր բավարարում են գրանցման պահանջները:</p>	<p>1. Ազատության սկզբունք</p>
<p>ծ) Բոլոր ընտրողներն օրենքի շրջանակներում ունեն հավասար իրավունքներ և հավասար պայմաններ՝ իրենց ընտրական իրավունքն իրականացնելու նպատակով: Միևնույն ընտրական շրջանի բոլոր ընտրողներն ունեն հավասար թվով ձայների իրավունք:</p>	<p>2. Անմիջականության սկզբունք</p>
<p>զ) Բոլոր ընտրողներն ուղղակիորեն են ընտրում իրենց ներկայացուցչին պետական մարմիններում:</p>	<p>3. Հավասարության սկզբունք</p>
<p>զ) Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է փակ քվեախցում առանց որևէ մեկի ներկայության, սրա հետ մեկտեղ բացառվում է մեկ այլ անձի կողմից լրացված քվեաթերթիկները տեսնելու հնարավորությունը:</p>	<p>4. Համընդհանուրության սկզբունք</p>
<p>յ) Յուրաքանչյուր ընտրողն ինքն է կայացնում ընտրությունների գնալու և իր դիրքորոշումն ամրագրելու վերաբերյալ որոշումը: Երաշխավորվում է ընտրություն կատարելու գործընթացն առանց ճնշումների և ահաբեկման, ինչպես նաև արգելվում է ցանկացած ընտրողի կամքի դրսևորման վերահսկողությունը:</p>	<p>5. Գաղտնիության սկզբունք</p>

(2) 16. Քարտեզն արտացոլում է կրոնների տարածումն աշխարհում: Համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված կրոններին II սյունակում ներկայացված քարտեզի լեգենդի (պայմանական նշաններ) գույները.



I. Կրոններ	II. Քարտեզի լեգենդի գույներ
ա) Բողոքական քրիստոնեություն	1. 
ծ) Կաթոլիկ քրիստոնեություն	2. 
ճ) Սուննի իսլամ	3. 
զ) Հինդուիզմ	4. 
ը) Թիերավադա բուդդայականություն	5. 

Հրահանգ

Միալի ուղղում (№17)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Հաշվի առեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(7) **17. Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Պետություն

Մարդը սոցիալական էակ է և այլ մարդկանց հետ համակեցությամբ նա ստեղծում է գոյակցության տարբեր ձևեր, որոնցից մեկն է պետությունը: Հին Հունաստանում պետություն մեջ բնակվելը և դրա կառավարմանը մասնակցելն այնքան կարևոր երևույթ էին համարում, որ փիլիսոփա Պյութագորասը մարդկանց նույնիսկ «քաղաքական կենդանի» էր անվանում:

Պատմության ընթացքում մարդիկ տարբեր տեսակի պետություններ են ստեղծել, որոնք միմյանցից տարբերվում են կառավարման ձևով, գաղափարախոսությամբ կամ տարածքային կառուցվածքով: Կառավարման ամենահին ձևերից մեկը միապետությունն է: Միապետությունը ռելատիվ է, եթե ամբողջ պետական իշխանությունը կենտրոնացած է մեկ անձի՝ միապետի ձեռքում: Այն դեպքում, եթե միապետի իշխանությունը սահմանափակվում է ընտրովի մարմնի կողմից, ապա նման կառավարումը կոչվում է սահմանադրական միապետություն: Այն երկրում, որտեղ մարդիկ պետական իշխանությունը ձեռք են բերում անհատական վաստակի և անձնական տաղանդի հիման վրա, կառավարումը մերիտոկրատական է: Եթե պետական օրենքները սահմանում են հոգևոր հիերարխները, ապա այդ երկրի կառավարումը արիստոկրատական է, իսկ եթե պետական իշխանության աղբյուրը ոչ հարստությունն է, ոչ ծագումը, ոչ էլ կրոնը, այլ ժողովուրդը, ապա պետությունը դեմոկրատական է:

անցնել տեքստի երկրորդ էջին

Ժամանակակից դեմոկրատական պետության փիլիսոփայական հիմքերը հայտնի են այսպես կոչված «բնական պայմանագրի» տեսություն անվամբ: Այդ տեսության ամենաճանաչված ներկայացուցիչներն են Թոմաս Հոբսը, Ջոն Լոքը և Ժան-ժակ Ռուսոն:

Դեմոկրատական երկրում կարևոր է քաղաքացու դերը և նրա ակտիվ ներգրավվածությունը պետական կառավարման հարցերում մեծապես որոշում է դեմոկրատիայի որակը: Ժամանակակից դարաշրջանում դեմոկրատիայի ամենատարածված ձևը, այսպես կոչված ուղղակի դեմոկրատիան է, որի դեպքում քաղաքացիները պետության կառավարումն իրականացնում են իրենց ներկայացուցիչների միջոցով:

Կառավարման ձևերից բացի, երկրները միմյանցից տարբերվում են նաև տարածքային կառուցվածքով: Օրինակ՝ ԱՄՆ-ն, Գերմանիան, Բրազիլիան և Հնդկաստանը ունիտար պետություններ են, որտեղ կենտրոնական իշխանության հետ մեկտեղ գործում է նաև համապատասխան տարածքային միավորների իշխանությունը:

Չնայած նրա, որ ժամանակակից պետություններն ակտիվորեն ներգրավված են միջազգային առևտրի մեջ և հնարավոր է լինեն նաև տարբեր դաշինքների անդամներ, սկզբունքայնորեն կարևոր է նրանց անկախությունը ներքին քաղաքականություն վարելու գործում: Պետության բացառիկ լիազորությունն իր իսկ տարածքում և դրա անձեռնմխելիությունն այլ պետությունների կողմից նշվում է սուբորդինացիա եզրույթով:

Վերադառնալ տեքստի առաջին էջին

Հրահանգ


Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№ 18, 19.2, 19.3, 20, 21, 22, 23.3-23.7)

Առաջադրանքում տրված է հարց, որին կցված չեն ենթադրական պատասխաններ: Ուշադրությամբ կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Պատասխանը պետք է լինի հարցին համարժեք և կոնկրետ: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

(4) **18. Սխեման ոչ լիարժեք կերպով արտացոլում է Վրաստանում իշխանության մարմիններն ու հիմնական դրանց գործառույթները: Լրացրեք սխեմայի դատարկ վանդակները.**

Պետական իշխանության ճյուղեր	Իշխանության մարմիններ	Գործառույթներ ու իրավասություններ
Օրենսդիր	Խորհրդարան	<ul style="list-style-type: none"> • Օրենքների ընդունում:
		<ul style="list-style-type: none"> • Որոշել երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները
		18.1
Գործադիր	18.2	Իրականացնել երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը, իրագործել գործող օրենքները:
Դատական	Սահմանադրական դատարան	18.3
	18.4	Վերանայել և լուծել տարբեր կազմակերպությունների, անհատների և պետական հաստատությունների միջև առկա քաղաքացիական կամ վարչական վեճերը: Քննել քրեական գործերը:

- (3) 19. Ներկայացված է 2015-2020 թվականի քարտեզ: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հետևյալ հարցերին.



(1) **19.1 Ի՞նչ է արտացոլում ներկայացված քարտեզը:**

- ս) միգրացիայի սալդոն,
- ծ) ժողովրդավարության որակը,
- ճ) կառավարման ձևերը,
- Վ) տնտեսական զարգացումը:

(1) **19.2 Քարտեզի տվյալների հիման վրա ինչպիսի՞ իրավիճակ է Վրաստանում:**


(1) **19.3 Քարտեզի տվյալների հիման վրա դատողություններ արեք, թե ի՞նչ դրություն է Ավստրալիայում և Կանադայում: Անվանեք այդ դրությունը պայմանավորող հիմնական պատճառները:**

(5) **20.** Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

- I. Որոշեք և գրառեք II խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից: (*Առաջադրանք 20.2*)
- II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք Ձեր կարծիքով, նպաստում են աղյուսակում տրված I խնդրի կատարմանը: (*Առաջադրանք 20.3*)
- III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդիրների և դրանց իրականացման ուղիներից ելնելով: (*Առաջադրանք 20.1*)

20.1	<u>Նախագծի նպատակը.</u> <i>(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով):</i>
20.2	<u>Նախագծի I խնդիրը.</u> Բարձրացնել տարբեր մասնագիտությունների և դրանց առանձնահատկությունների մասին բարձր դասարանների աշակերտների իրազեկվածությունը <u>Նախագծի II խնդիրը.</u> <i>(Որոշեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով II խնդրի իրականացման ուղիներից)</i>
20.3	<u>I խնդրի իրականացման ուղիներ.</u> <i>(գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղիներ):</i> 1. 2. 3. <u>II խնդրի իրականացման ուղիներ.</u> 1. Անցկացնել դասընթացներ աշակերտների ինքնագնահատման ուղղությամբ. պարզել անձնային առանձնահատկությունները, հակվածությունները, հետաքրքրությունները, կարողությունները, արժեքները: 2. Հրավիրել մասնագետ՝ աշակերտներին անձնային գործոնների և իրենց ընտրած մասնագիտության համապատասխանության հետ կապված խորհուրդներ տալու նպատակով: 3. Նպաստել աշակերտների ստաժավորմանը՝ ըստ հետաքրքրությունների ոլորտի, աշխատանքային միջավայրին ծանոթանալու նպատակով:

(4) 21. Ծանոթացեք նկարին և պատասխանեք հետևյալ հարցերին.



21.1 Դատողություններ արեք, թե ի՞նչն է նկարի հիմնական ասելիքը:

21.2 Ո՞ր եզրույթով է նշվում նկարում պատկերված սոցիալական համակարգը: Անվանեք այն սոցիալ-քաղաքական շարժումը, որը նպատակ ունի վերացնել նկարում պատկերված խնդիրը:

21.3 Փաստարկված դատողություններ արեք, թե որքանով է հրատապ նշված խնդիրը Վրաստանում, և ի՞նչ իրավական մեխանիզմներ կան այն հաղթահարելու համար:

(5) **22. Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված ցուցումների համապատասխան.**

«Այն սկզբունքները, որոնց հիման վրա վարում են [Խորհրդային] տնտեսությունը, ենթադրում է հետևալը՝ Խորհրդային պլանավորման ապարատը (և քաղաքական ղեկավարությունը) պնդում է, որ տեղյակ է հասարակության կարիքներին, և հետևաբար հրահանգներ է տալիս այդ կարիքները բավարարելու համար: Ենթակայության տակ գտնվող մենեջերների առաջնային խնդիրն է հետևել այս հրահանգներին: Ինչպես կտեսնենք հաջորդիվ, տեղեկատվական հոսքերը, որոնց հիման վրա [տնտեսության] պլանավորողները հրահանգներ են տալիս, բխում են իրենց ենթակայության տակ գտնվողներից, և սխալ կլիներ համարել, որ մենեջերները պարզապես վերևից ընդունած հրամանների պասիվ կատարողներ են: Այնուամենայնիվ, փաստը մնում է փաստ՝ Խորհրդային Միության ղեկավարությունը պետք է պնդի, որ ինքը և իր ենթակայության տակ գտնվող պլանավորողները բոլորից լավ գիտեն, թե ինչ է պետք անել, քանի որ միայն այդ պնդման հիման վրա որևէ մեկը կարող է արդարացնել կենտրոնացված կառավարվող պլանավորումը»:

Ալեկ Նովե, «Խորհրդային տնտեսական համակարգ», 1977 թվական:

- (1) 22.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և արդիականության մասին:
- (4) 22.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը պաշտպանելու համար:
- B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է ունենա էապես տարբերվող իմաստ)

(9) **23. Վերլուծեք ներկայացված աղբյուրները և պատասխանեք հետևյալ հարցերին.**

Աղբյուր N1

«Շաբաթօրյակը» Խորհրդային Միությունում



Աղբյուր N2

Ժամանակակից Թբիլիսին




Անցնել աղբյուրներին՝ [3](#) [4](#) [5](#) [6](#)

Անցնել առաջադրանքներին. [23.1](#) [23.2](#) [23.3-23.7](#)

Աղբյուր N3

Բարեգործության քարտեզ, 2015 թվական:



Անցնել աղբյուրներին՝ [1-2](#) [4](#) [5](#) [6](#)

Անցնել առաջադրանքներին. [23.1](#) [23.2](#) [23.3-23.7](#)

Աղբյուր N4

«Ազատությունը չի կարող հավասարվել բարիքի, ճշմարտության, կատարելության հետ: Ազատությունն ունի իր ինքնատիպ էությունը: Ազատությունն ազատություն է և ոչ թե բարիք: Եվ ազատությունը շփոթել և նույնացնել բարիքի ու կատարելության հետ նշանակում է ժխտել այն, ընդունել ճնշման և բռնության ուղիները: Հարկադրված բարիքն արդեն բարիք չէ, այն վերածվում է չարիքի, մինչդեռ ազատ բարիքը, որը միակ բարիքն է, նաև չարիքի ազատություն է ենթադրում: [...] Չարիքի ազատության ժխտումը և միայն բարիքի ազատության ամրապնդումը հանգեցնում է ազատության ժխտման՝ այն վերածելով բարի անհրաժեշտության: Սակայն բարի անհրաժեշտությունն արդեն բարիք չէ, քանի որ բարիքը ազատություն է ենթադրում»:

Նիկոլայ Բերդյաև, «Դոստոևսկու աշխարհընկալումը», 1923 թվական:

Աղբյուր N5

«Ընդհանուր աշխատանքային մոբիլիզացման կամ աշխատանքային նպատակով կուսակցական մոբիլիզացման ընթացքում, ինչպես նաև շաբաթօրյակ կամ կիրակնօրյակ անցկացնելիս տեղական կոմիտեները, համաձայն գործող հրահանգների, ստիպված են ուշադիր հետևել կուսակցության անդամների վարքագծին: Այս կամ այն ձևով աշխատանքային պարտականությունից խուսափողները ոչ միայն պետք է վտարվեն կուսակցական կազմակերպություններից, այլև նրանց անունները պետք է հայտնվեն սև ցուցակում, որպեսզի հետագայում չկարողանան զբաղեցնել հասարակության վստահությունը պահանջող պաշտոններ»:

Լև Կամենև, Ռուսաստանի կոմունիստական կուսակցության IX համագումար, 1920 թվական:

Աղբյուր N6

«Բոլոր բռնապետություններից թերևս ամենաճնշողն այն է, որն անկեղծորեն իրականացվում է իր զոհերի բարօրության նպատակով: Ըստ երևույթին, ավելի լավ է ապրել ավազակի, քան իրենց բարոյականությունը պարտադրող, հանգիստ չտվող ամենակարող կառավարիչների իշխանության պայմաններում: Ավազակի չարիքը երբեմն կարող է հանդարտրվել, նիհեիլ: Նրա ընչաքաղցությունը ինչ-որ պահի կարող է բավարարվել, սակայն նրանք, ովքեր մեզ տանջում են մեր իսկ բարօրության համար, անվերջ տանջելու են մեզ, քանի որ նրանք դա անում են իրենց սեփական խղճի հետ համաձայնեցված»:

Քլայվ Լուիս, «Պատժի հումանիտար տեսություն», 1954 թվական:

(1) **23.1 Բերդյանի տեքստի համաձայն՝**

ս) Մարդկանց ազատություն ունենալու նպատակը բարիք գործելն է:

ծ) Չարիքի ազատության առկայությունը բարիք գործելու միակ հնարավորությունն է:

զ) Անպայման պետք է սահմանափակել դեպի չարիք տանող ազատությունը:

զ) Բարության անհրաժեշտությունը մարդկանց միությանը ազատ համակեցության հնարավորություն է տալիս:

Անցնել աղբյուրներին՝ [1-2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#)

Անցնել առաջադրանքներին. [23.2](#) [23.3-23.7](#)

(1) **23.2 N5 աղբյուրի համաձայն՝**

ս) Կոմունիստական կուսակցության անդամները մեծ խանդավառությամբ էին վերաբերվում ընդհանուր աշխատանքների կատարմանը:

ծ) Տեղական կոմիտեների նպատակն էր խրախուսել կոմունիստական կուսակցության վաստակաշատ անդամներին:

ճ) Շաբաթօրյակի և այլ տեսակի ընդհանուր աշխատանքներից խուսափելը բացասաբար էր անդրադառնում կոմունիստական կուսակցության անդամների կարիերայի վրա:

Տ) Կուսակցական կազմակերպության յուրաքանչյուր անդամ առանց որևէ հարկադրանքի հոգ էր տանում ոչ միայն անձնական սեփականության, այլ նաև ընդհանուր բարիքների մասին:

- (1) 23.3 Նիկոլայ Բերդյանի տեքստի համաձայն դատողություններ արեք, ինչո՞ւ է բարիքը ենթադրում ազատություն, իսկ ազատությունն, իր հերթին չի ենթադրում միայն բարիք:
- (1) 23.4 Բացատրեք, ինչպե՞ս է կապված Նիկոլայ Բերդյանի տեքստը Քլայվ Լուիսի տեքստի հետ:
- (1) 23.5 Քննադատորեն վերլուծեք N1 աղբյուրում պատկերված երևույթը, կիրառելով N4, N5 և N6 աղբյուրները:
- (2) 23.6 Նկարագրեք N3 աղբյուրում ներկայացված քարտեզի հիմնական միտումը: Կիրառելով ձեր գիտելիքները և բոլոր աղբյուրները դատողություններ արեք այն հնարավոր պատճառների շուրջ, որոնք ազդեցություն են գործել այս միտման ձևավորվածման վրա:
- (2) 23.7 Օգտվելով Նիկոլայ Բերդյանի տեքստից, որոշեք Վրաստանի իրականությանը բնորոշ հիմնախնդրի էությունը, որը դրսևորվում է N2, N3 աղբյուրներում և դատողություններ արեք, թե ինչպե՞ս է հնարավոր հաղթահարել այն:

Անցնել աղբյուրներին՝ [1-2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#)

Անցնել առաջադրանքներին. [23.1](#) [23.2](#)